

## Բայաթիներ

Աբովյանի պոեզիայի չափազանց ինքնատիպ մասն են կազմում բայաթիները, որոնք առաջին անգամ հայ գրականության մեջ աշխարհաբար լեզվով մշակել և ժողովրդական երգերի ու խաղերի ոճով ու նմանությամբ ստեղծել է Խաչատուր Աբովյանը: Իր բայաթիների մասին Աբովյանն ասում է. «Բայաթիքը էն մտքով եմ գրել, որ չունքի մեջլսում, հացի վրա թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայր հայեվար ասի, որ քիչ քիչ լեզուն քաղցրանա, չունքի ոչինչ բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղն ու տաղը»:

Այս խոսքերը ցույց են տալիս բայաթիների գործնական-կիրառական կողմը: Սրանից բացի բայաթիները իրենց մեջ կրում են նաև գեղարվեստական որոշակի արժեք, որտեղ արտացոլված են կարոտի, չվայելած սիրո, թախծի ու տխրության ժողովրդական երանգները: Աբովյանի բայաթիները ստեղծված են գեղարվեստական ինքնատիպ պատկերներով: Հեղինակի գրչին է պատկանում 80 բայաթի:

1.

Երկնքի կանաչ կարմիր,  
Ա՛յ սիրուն կանաչ կարմիր.  
Լերդս ու թոքս չորացել են,  
Մար ու ձոր՝ կանաչ կարմիր:

2.

Դաշտի ծաղկի ռանգեռանգ  
Մեզ նման կարճ է օրն ու կյանք.  
Ծաղիկն՝ որ հոտ չունենա,  
Էլ ի՞նչ օգուտ ռանգեռանգ:

3.

Ընկել եմ, ա՛խ, սարեսար,  
Դարման չունիմ, ո՛չ մեկ ճար:  
Ուզում եմ զամ քո ոտը,  
Առաջս՝ ծով, սա՛ր է, սա՛ր:

4.

Տե՛ս էս դշերի, ա՛խ, դասթեն,  
Մոտդ եկան, քեզ հասրաթ են,  
Թո՛ի՛ր դրանց հետ ու արի՛,  
Թուրն ինձ խփի՛ր, քեզ դասթեն:

5.

Էնդուր համար եմ, Էնդուր  
Էրվում, պրծնիմ, ա՛ իս, մեկ օր,  
Աշխարքն ինձ տաս, պետք չի,  
Թուրդ եմ ուզում, ինձ է՛ն տուր:

6.

Սրտիս մի՛ տար, որ էրես,  
Ինձ փոթոթես, խորովես:  
Հոգիս ուզիր, ես քեզ տամ.  
Թո՛ղ մեկ տեսնիմ քո էրես:

7.

Կանաչ են սա՛ր ու ձոր,  
Ձենս բարակ, սիրտս խոր:  
Հոգիս էլ տամ, չես լսիլ,  
Ի՞նչ ես ընկել սար ու ձոր:

8.

Սիրտս կաթել ա արին,  
Քո մարմինն եմ, քո արին,  
Ե՛ղ արի մեկ, աչքով տե՛ս,  
Թե սիրելու ի՞նչ արին:---

9.

Էն տանը մեռնիմ, ա՛ իս, էն տան.  
Որ աչքդ բացիր՝ աննման:  
Մեկ բուռն հողիդ եմ կարոտ,  
Ասա՛, որ ինձ, ա՛ իս, ե՛ն տան:---

10.

Ո՞վ ա լսել՝ սար սարի  
Դիպչի, մոտ գա ու կպչի:  
Քո սար գլխին ես դուրբան,  
Ինձ մի՛ անիլ սարսարի:

11.

Դոշիս վրա քարքաշան  
Արին, տարան քո նշանն:  
Թե սաղ էլ հողը մտնիմ,

Ո՞վ կըլի իմ քարքաշանն:

12.

Քեզ որ տեսա ջրի սաղին:  
Խելքս թռավ էն հաղաղին,  
Հենց մարդ պետք է հոգին տա,  
Որ չսպանես դու սաղին:

13.

Ո՛չ ձենս ես դու իմանում,  
Ո՛չ շունչս առնում, ինձ տեսնում:  
Էսքան դռնեդուռ ընկա,  
Բեղնամ ելավ իմ անում:

14.

Ի՞նչ ես տանջվում՝ ա՛յ նաչար,  
Որ չունիս քեզ մեկ հավար:  
Մեկ սիրտ որ դարդ չիմանում,  
Հալբաթ վատ ե ու նա չար:

15.

Ձին ա գալիս սարի գլխին,  
Մարի դռշին, քանակին:  
Աչքս գցել եմ քո ճամփեդ,  
Վա՛յ տալիս՝ իմ չոր գլխին:---

16.

Քեզ ի՞նչ արի, կտրեցիր  
Լեզուդ, ինձմեն քաշվեցիր.  
Ի՞նչ ես արել եդ թուրը,  
Մեկ սիրտ ունիմ, կտրեցիր:

17.

Միրտս պատկեր չի, քաշեմ,  
Քեզ տամ, ինձ էլ չմաշեմ,  
Միս ա, թուր էլ խփում ես,  
Ի՞նչ անեմ, ա՛խ չի քաշեմ:

18.

Ես տեղ շատ մարդիք կան, լես

Քե՛զ եմ կարոտ , քեզ՝ ա՛խ՝ ես:  
Որ գաս, տեսնիս ինձ հողումն,  
Ե՞րբս վրես սուք կանես:

19.

Գերեզմանդ մնացել բաց,  
Տունն ընկել ա սուք ու լաց:  
Դվորն գնում ես, ինձ էլ տա՛ր,  
Բա՛ց երեսդ, աչքդ բաց:

20.

Լա՛ց իմ որս, ա՛զիզ՝ լա՛ց,  
Երբ գաս, տեսնիս ինձ մեռած:  
Շատ էլ հասրաթդ քաշեցի,  
Ինձ սպանեց սուքն ու լաց:

21.

Նի ես ելել քյահրան ձին,  
Քար եմ դառել քո կշտին:  
Ի՞նչպես պետք է անցկենաս  
Էն՝ լեռ սարը, էն խոր ձին:

22.

Ա՛խ՝ ձեր բաշին ու ձեր տան  
Կտրին, աչքերս քեզ տեսան:  
Թո՛ղ Հոգիս ես մեկ քեզ տամ,  
Ում ուզենաս, լաշըս տան:

23.

Միրտար սհաթ ե, սհաթ.  
Որ թե լարես՝ ա՛խ բեվախտ,  
Խարաբ կըլի: Թե թողաս  
Ու չտեսնիս սհաթե սհաթ:

24.

Ինձանից՝ դու ձե՛ռք քաշիր.  
Կուզես, հոգիս ա՛ռ, քաշվիր,  
Մահիս դիրը գրվել ա,  
Դո՛ւ էլ արի՛, ձեռք քաշիր:

25.

Գնացի՛ր, ա՛խ՝ ե՛ղ արի,  
Ես մեռնում եմ, ե՛ղ արի:  
Դու իմ յարես կապեցիր,  
Էն էլ դարդու ե՛ղ արի:

26.

Աչքս ճամփիդ է, արի՛,  
Արի՛, հոգիս ա՛ռ, արի՛:  
Գյունահս երեսովս չտաս  
Փռճմանել եմ, ինչ արի:

27.

Մի՛ դարդ անիր, սի՛րտ արա:  
Ի՞նչ ես երվում, սի՛րտ արա:  
Էդքան մաշվիլն պետքը չի՛,  
Ինչ ասում են՝ սի՛րտ, արա:

28.

Բարեկամիդ հետ մեկ տեղ  
Թո՛ղ քեզ սպանեն՝ ա՛խ՝ մեկտեղ:  
Անբարեկամ որ մեռնիս,  
Հողն էլ չի՛ տալ քեզ մեկ տեղ:

29.

Ա՛խ սառն է՝ սառն ես գետինն,  
Ջիզյար չունի, մեր սրտին  
Թուր է խփում, ու տանում,  
Մեր թոզը տալիս ե՛ս գետին: \_

30.

Ա՛նի, Ա՛նի, ա՛խ՝ Ա՛նի ,  
Քանդողիդ տունը քանդվի:  
Քեզ որ ազգը չպահեց,  
Մեկ սուգ անող ի՞նչ անի: \_

31.

Ա՛խ, իմ արևս մտավ մեր,  
Մնացի անհեր, անախպեր.  
Դու էիր կյանքս ու արևս,

Դու էլ գնացի՛ր, ա՛յ իմ մեր:

32.

Մնաց եմ մեկ էրում,  
Ա՛խ քաշելով ինձ սպանում.  
Թե չես դարդիս վրա հասնիլ  
Էլ ո՞ւր ես, ա՛խ, ինձ էրում:

33.

Երեսդ քա՛ց, ու ե՛ղ տար,  
Երբ ուզենաս, հոգիս ա՛ն:  
Թո՛ղ մեկ հողը, ա՛խ, մտնիմ,  
Է՛ն վախտը սերդ՝ էլ եղ տա՛ր:

34.

Տա՛ր էդ հավին, ա՛յ ուրուր,  
Աշխարքս դանակ ա ու սուր:  
Զոռ մարդի թուրն ա կտրում,  
Խեղճն ո՞ւր կորչի, ա՛խ, ո՞ւր, ո՞ւր:

35.

Գլուխս քցել եմ քարեքար,  
Ո՛չ տեր ունիմ, ոչ հավար.  
Ախր մեկ ցավիս հասնիս,  
Միրտդ մկամ քա՞ր է քար:

36.

Թե տաս էլ ինձ սրի բերնին,  
Էլի քո դուլն եմ, քո գերին,  
Հոգիս քեզ մոտ հո կըլի,  
Մեռնեմ էդ քո սուրբ բերնին:

37.

Քամու ձեռին տարուբեր  
Ըլում են ծառն ու ծաղիկներ.  
Միրտս որ չի դինջանում,  
Հա կաց՝ գլուխդ տար ու բեր:

38.

Ձեն տաս, չի լսիլ քեզ կարաս.

Թե լիքն ա մեջն, ձեռ չտաս.  
Դարդակին դարդդ էլ ասես,  
Չի իմանալ, ի՛նչ կարաս:

39.

Ինձ էրեցիր տակետակ,  
Աշխարքիցս իմ հիշատակ  
Կտրվել ա, փչացել,  
Ես մնացել եմ ծովի տակ:

40.

Ծարավ աղբրի ախբրի ա՛խ ակը.  
Մեր կանաչ բաղի տակը  
Միտքդ բեր ու ինձ հիշիր  
Խավարեց աչքիս ակը:

41.

Դու իմ ձեռը կապեցիր,  
Մտիս յարեն կապեցիր,  
Ինչ արի քեզ, որ էլ եդ  
Սիրտս արին կապեցիր:

42.

Աչքս տալիս ա սևին,  
Վայ իմ գլխին, արևին.  
Դու էլ հոգիս առել ես,  
Տալիս ես դևին\_սևին:

43.

Երեսն կակոդ ա, երես,  
Քար չի, որ թրի դեմ անես.  
Ինչ խոսք ունիս, ինձ ասա՛.  
Չանես ուրջին ինձ երես:

44.

Վատաբախտ եմ , վատաբախտն  
Ո՛չ որ ունի, ո՛չ մեկ բախտ.  
Ի՞նչ ես ցավում աղքատի ոտը  
Սև ա, վատ ա բախտն:

45.

Սներես եմ, սներես,  
Տեղն ա, ինչ որ ինձ ասես.  
Ո՞ւր քեզ իմ դարդն ասեցի,  
Որ ինձ մաշես, սն՛երես:

46.

Ես որ գնացինք բանջարի,  
Ռաստ եկանք ջրի, տարի.  
Դարտակ ման գալն պետքը չի,  
Խելք ունիս, մեկ բան ճարի:

47.

Միրքիդ դուրբան՝ այ տերտեր,  
Բոյրդ բարդի, չալ բեղեր  
Խելքս տարան՝ բեմուրվաթ,  
Քանի՞ կանչեմ՝ ա՛խ տե՛ր, տեր:

48.

Չարի ձեռ ընկա, չարի,  
Թե սպանի էլ, ինձ երի,  
Ո՞ւր գնամ ասեմ իմ ցավս,  
Ի՞նչ ասեցիր, ես շարի:

49.

Վազն ա գինին տալիս վազն,  
Որ չորանա, իմ մուրազին  
Կմնա փորումս, չի դուս գալ,  
Թե գաս հետս էլ վազեվազ:

50.

Ինչ որ ասեն, սի՛րտ՝ մի՛ մնար.  
Ցավդ ներս արա՛, մի՛ սքար.  
Մեկ բարեկամ որ ճարես,  
Էլ էս լաշումն՝ սի՛րտ մի՛ մնար:

51.

Ջանս դուս եկավ, սիրտս մնաց.  
Նա էլ արնով ա լցված.  
Ե՛դպես արիր, սիրեկան՝



Որ քեզանից սիրտս մնաց:

52.

Թե վախտ ունիս, արի՛, ու տե՛ս  
Հալըս, թե ինձ սիրում ես,  
Ես որ գնացի, չե՛ս հասմիկ,  
Ապրում ես, որ ինձ ուտես:

53.

Ման եմ գալիս մութն ե մութ,  
Քեզ չեմ գտնում ա՛յ անգութ.  
Արեգակն էլ որ քացվեի,  
Իմ սիրտս հո մութն ե մութ:

54.

Տա՛ր իմ հոգիս, հետդ տա՛ր,  
Ես խոր ձորումն մի՛ թողար  
Ինձ, որ երվիմ, խորովիմ,  
Ղարիք երկրում մնամ ոտար:

55.

Կարկուտն դիպավ մեր տեղին,  
Մեր հանդին, մեր ծաղիկներին.  
Ա՛խ քո դարդն եմ միշտ քաշում,  
Նրանք լիս չեն տալ իմ տղին:

56.

Ինձ ասեցիր քո անում,  
Էլ չես գալիս՝ իմ խանում.  
Էլ ի՞նչպես սերդ իմանամ,  
Որ եղպես ես ինձ անում:

57.

Ո՛չ տուն ունիմ, ո՛չ աման,  
Թե որ գան, ինձ գողանան.  
Հացի կարոտ մնացել եմ,  
Գիշերս վա՛յ, որս ամա՛ն:

58.

Կուզեմ առաջիդ թռչել,

Ճամփեդ կապել ու փախչել.  
Որ թե արին էլ դու կաս,  
Ջուր չգտնիս, աչքդ թրջել:

59.

Ի՞նչ ես երվում տանն ու դռանն,  
Իմ աչքի լիս սիրեկան,  
Եղ դարդը քեզ տվողը  
Հալբաթ կանի մեկ ճար դրան:

60.

Մարդիս կյանքն է առ ու տուր,  
Մեկ խեր կըգա, մեկ շառըշուռ:  
Դու քո ճամփեդ մի՛ ծոիր.  
Թե պարտք ունիս ա՛ռ ու տուր:

61.

Ջանս քեզ դուրբան աղա,  
Թագավորի աչք աղա.  
Բաս չե՛ս գիտուն՝ որ սերը  
Խոցված սրտի հմար աղ ա:

62.

Ինչ ցավ ունիս, վե՛ր ածիր.  
Քեզ կսպանեն, մ՛ի մաշվիր.  
Մազդ քորքիր, սիրտդ բա՛ց,  
Եղ ֆիքրդ թող, վեր ածիր:

63.

Քանի հարուստ ու քոք ես,  
Ամենի աչքի լիսն ես,  
Ձեռդ պակաս, ձեն չի տալ,  
Մազդ հազար էլ որ քոքես:

64.

Քո եսիրն եմ՝ խեղճ արի.  
Թուրդ սրտիցս եղ քաշի.  
Թո՛ղ հողդ մտնիմ էն վախտը  
Կանգնե վրես՝ խե՛ղճ, արի:

65.

Ինձ թողում են, քեզ տանում  
Դուռն երեսիս հետ անում.  
Որ քո շվանքն էլ չե՛մ տեսնիլ,  
Էլ ի՞նչ անեմ ես տանում:

66.

Ո՞ւմ ասեմ դարդս՝ որ լսի,  
Էլ ցավս ուրջի եդ չասի.  
Թող սիրտս մենակ խավարի,  
Հասրաթ մնա, մեկ լսի:

67.

Ա՛խ, ի՞նչ ես էլ թուրդ սրում ,  
Հոգիս տալն ես եմ ուզում.  
Ջանս որ հատավ, ինձ մեկ ա,  
Կրակում ըլիմ, թե սրում: